ՆՈՐ-ԴԱՐ

№ 214 ԱՒԱՋԻՆ ՏԱՐԻ Հաբաթ 29 Դեկտեմբերի **1884** Հաբաթ 29 Դեկտեմբերի ԱՒԱՋԻՆ ՏԱՐԻ № 214

Տարեկան 10 բաբլի. վեց ամսոյ 6 բաբլի. երեք ամսոյ՝ 3 բ. 50 կ.
Հասալ՝ 5 կոպեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում՝ մխիթարեան տպարանում։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Titlis, Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը յայտարարութիւնները ընդունվում են ամեն ժամին։
Յայտարարութեան վճարը բառին 2 կ. բնկլամների համար՝ կրկնապատիկ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ

Թիֆլիսում

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ **1885** ԹՈՒԱԿԱՆԻՆ

ՆՈՑՆ ԴԻՐՔՈՎ և ԾՐԱԳՐՈՎ

(Երկրորդ տարի)

Ցուցակ

I. Տէրութեան կարգադրութիւններ։
II. Առաջնորդող յօդուածներ-առօրեայ ամեն տեսակ խընդիրների մասին։
III. Քրոնիկոն — լուրերը, առօրեայ անցքերի համառօտ տեսութիւններ, վատահական յօդուածներ զանազան նիւթերի վերաբերութեամբ։
IV. Թղթակցութիւնները — Կովկասից, Ռուսիայից և միւս երկիրներից։
V. Քաղաքական — Քաղաքական կեանքի և երևոյթների վերաբերեալ տեսութիւններ, յօդուածներ և լուրեր։
VI. Խառն լուրեր։
VII. Հեռագիրներ։
VIII. Առևտրական տեղեկութիւններ։
IX. Խմբագրական պատասխաններ։
X. Բանաստեղծական — ֆէյլետօններ, պատկերներ, զրոյցներ, վէպեր, վիպասանութիւններ, գիտութեան, գեղարուեստների, արհեստների և արդիւնագործութեան ամեն ճիւղերին վերաբերեալ աշխատութիւններ և քննադատական յօդուածներ։
XI. Յայտարարութիւններ—Հայոց և օտար լեզուներով։

ՏԱՐԵԿԱՆ գինն է 10 րուբլի, վեց ամսուան՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.

Խմբագիր—Հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

Դ ան ո թ. „Նոր-Դար“-ի խմբագրութիւնը անցեալը երբև վորձ ընդունելով իւր կողմից ոչնչ խնայելու չէ առաջնակարգ ա մ ե ն օ ր ե ա յ թերթի բաժանմունքները կարելուոյն չափ աւելի ճոխացնելու և պակասը լրացնելու։ Մնում է միայն, որ ընթերցող հասարակութիւնը բաժանորդ գրուելով աջակից գործի յաջողութեանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis (Caucase) Rédaction „Nor-Dar“։

ԽԱՉԱՏՈՒՐ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ և ՏԻՐ ԳԷՈՐԳ ԱԲՈՒԼԵԱՆՑՆԵՐԸ, *ցաւօք սրտի յայտնելով առաջինը իւր զաւակ, երկրորդը իւր ամուսնոյ, երրորդը իւր եղբօր ամուսին՝* ՍՕՓԻԱ ԱԲՈՒԼԵԱՆԻ *մահուան մասին՝ խնդրում են իրենց ազգականներին և ծանօթներին շնորհ բերել յուղարկաւորութեան հանդիսին, որը տեղի է ունենալու կիւրակի՝ 30-ին դեկտեմբերի, Սարաջեվի տանից, Նորաշէնի փողոցում, դէպի Զգրաշէնի եկեղեցին։*

1—1

Ս. Զ. Դ.

«Նոր-Դար-»ի առաջիկայ 1885-ի համար բաժանորդագրութիւնը բացուած է։ Բաժանորդ են գրվում ՄԻՄԻՒՆՑՆ խմբագրատունը—պատատան եաև, Սամբա վրայ եկեղեցուն հանդէպ։ Օտարաքաղաքացիք դիմում են հետևեալ հասցէով. Тифлисъ, редакція «Норъ-Даръ».

Եւրոպայում և Թիւրքիայում «Նոր-Դար»-ի տարեկան բաժանորդագինը՝ 30 ֆրանկ է։ Ուսանողները վճարում են 10 ր.։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մեր հանրօգուտ հաստատութիւնները։

Քրոնիկոն. Լուրեր, „Նոր-Դար“-ի խմբագրութեան երկու խօսք Կովկասեան Հայոց Բարեգ. Ընկ. մասին։

Թղթակցութիւններ.—Ախալցխայից, Ումանից և Լէյպցիգից։

Քաղաքական. Լուրեր։

Խառն լուրեր։

Հեռագիրներ.—

Առևտրական.—Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 28 դեկտեմբերի 1884։

ՄԵՐ ՀԱՆՐՕԳՈՒՏ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

—

Մեր ընթերցողները նախընթաց համարում կարդացած կը լինին երկու նամակ, մէկը՝ Նոր-Նախիջևանից, միւսը՝ մեր քաղաքից։ Նոր-Նախիջևանի նամակից իմանում ենք, որ նախիջևանցի հայերը հանրօգուտ գործերին համակրութեամբ են վերաբերվում և այդ մասին առաջարկութիւնները իսկոյն ընդունելութիւն են գտնում նրանց մէջ. մենք իմանում ենք նոյնպէս, որ վոքրիկ Նախիջևանում կայ և մի Հայուհեայ ընկերութիւն, որին գլուխ կանգնած յարգելի տիկինները եռանդով գործում են առանց ցոյցերի։ Այդ ընկերութիւնը բացել է Հռիփսիմեան օրիորդաց դպրոցի արհեստանոց՝ աշակերտուհիներին կար, դերձակութիւն սովորեցնելու համար։ Այդ քաղաքում յայտնի մի անձի՝ պ. Մ. Պալասանեանի նախաձեռնութեամբ կլուբի տարեկան ընդհանուր ժողովին վճռվում է թղթախաղից մի որոշ տակոս առնելով յանձնել Հռիփսիմեան օրիորդաց դպրոցի օգտին։ Կլուբը օգնում է դպրոցին. սա ուշադրութեան արժանի երևոյթ է. մի հայ՝ պ. Մ Պալասանեան, թղթախաղից բաժին է հանել տալիս խեղճ և քնքոյշ սերնդի կրթութեան և ապագայ դրա բարօրութեան գործին՝ իբրովանն աջակցելով Հայուհեայ ընկերութեան,—սա գովելի և օրինակելի է։ Հազիւ թէ երկու տարի գոյութիւն ունեցող Հայուհեայ ընկերութիւնը ունի—ուժը հազար րուբլի իւր գանձարանում։

Իսկ մեր քաղաքից մեզ ուղղած նամակից իմանում ենք, որ Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութիւնը, որ ամենաընդարձակ և գեղեցիկ նպատակներ ունի և իւր ծննդեան ժամանակ այնքան մեծ և փառաւոր ապագայ էր խոստանում, այդ ընկերութիւնը յետ է գնում այսօր և փոքր է մնում, որ նրա գոյութիւնն էլ մոռացուի։ Այս օրուայ համարում Քրոնիկոնի բաժնում հրատարակուած յօդուածը խօսում է նոյնպէս մեր Բարեգործ. Ընկերութեան թշուառ դրութեան վերայ։ Բայց մեզ հարկաւոր չէ, որ մեզ այդ ըրեն, մենք ինքներս շատ լաւ գիտենք թէ ինչ դրութեան մէջն է մեր միակ իւր տեսակում—Բարեգործ. Ընկերութիւնը։ Մեր Բարեգործ. Ընկերութիւնը այսօր նոյն դրութեան մէջն է, ինչ դրութեան հասնում են սովորաբար մեր ամեն հանրօգուտ ձեռնարկութիւնները, երբ դրանք մի որոշ ժամանակ գոյութիւն ունենալով՝ այլ ևս նորութիւն չեն ներկայացնում. անտարբերութիւնը և սառնութիւնը շրջապատում է դրանց։ Համեմատել Թիֆլիսի հայերը Պօլսի հայերի հետ բարեգործութեան մէջ—դա աւելորդ է, որովհետև մեր երկրի հայերը այդ կողմից բարձր են պօլսեցիներից։ Որ Միացեալ Ընկերութիւնների օգտին տուած պարահանդէսին եկամուտը 8—10,000-ով է լինում, դա մի մեծ բան չէ մի մայրաքաղաքում, որտեղ դեսպաններն էլ են միմեանց հետ մրցում և օգնում են այդ գործին և ուրիշ հանգամանքներ, որոնք գուցէ բարեգործութեան զգայմունքի հետ ամենևին կապ չունեին։ Հաստատն այն է, որ Թիֆլիսցին կ'ամաչէ, եթէ օրինակ Ե. Բևանում հանգանակութիւն բացուի Թիֆլիսցիների օգտին՝ Թիֆլիսում մի դպրոց հիմնարկելու համար. բայց պօլսեցիները այդ ամօթ չեն համարում և ամենայն սիրով կ'ընդունեն նոյն իսկ մեր խեղճ գիւղացիներից փողեր՝ Պօլսում դպրոց բանալու համար։ Դեռ մինչև օրս էլ չ'իմացանք, որ Պօլսից մէկ հինգ կոպէկ եկած լինի օրինակ հեղեղից վնասուած գուլեցիների օգտին։

Այդ կողմից մեր երկրացի հայերը բարձր են, հասարակ ժողովուրդը աւելի անկեղծ է և միշտ պատրաստ իւր լումայն ձգելու այնտեղ, որտեղ նա կարծում է, որ մի բարի, աստուածահաճոյ գործ է կատարում։ Այդ մեր հասարակ դասի վերաբերութեամբ սոյն համարի քրոնիկոնում հրատարակած յօդուածի մէջ արած դիտողութիւններն ուշադրութեան արժանի են։

Թիֆլիսի հայը ուրիշ պայմանների մէջ է դրուած, Նախիջևանի հայը՝ ուրիշ, բայց այդ պայմաններն չեն կարող երբեմն տարբերութեամբ այն հետևանքներն առաջ բերել, որ մեր մէջ հիմք գբած բարեգ. ընկերութիւնը յետ մնար, իսկ Նախիջևանինը առաջ գնար։

Ընդհանուր առմամբ, թէ ինչու մեր հանրօգուտ ընկերութիւնները, հաստատութիւններն հիմք չունեին, տևողական չեն, այդ մասին մենք ուրիշ առթիւ խօսել ենք։ Քանի որ մի ժողովուրդի մէջ հասարակականը կուլ է գնում անձնականի մէջ և իշխանչիլը գործ, որքան էլ դա ընդհանուրին վերաբերում լինեը, կրում է իւր վերայ անձնականութեան դրոշմը, բաւական է, որ հիմքերը խախուտ լինին և նա տևողական չը լինի։

Անձնականութեան յատկանիշն է, որ նա, կամայ ակամայ, պիտի ձգտէ գործերը սեղմելու. ուստի չը պիտի զարմանանք, որ մեր հանրօգուտ գործերը, ինչպես բարեգործ. ընկերութիւնները, գնալով՝ ընդարձակուելու փոխարէն՝ աւելի փոքրանում են, և գնալով անգամներ թիւը բազմանալու տեղ՝ աւելի նուազում է։

Բայց թէ ինչու մեր հասարակական գործերը կրում են անձնականի դրոշմը, դրա պատճառն այն է, որ մեր ժողովուրդը դեռ հասարակականն և ընկերական կեանքի համար հարկաւոր զարգացման, հետևաբար և այդ կեանքից ստանալիք օգուտների գիտակցութեան չէ հասել։

Պարապ խօսքեր են, թէ առևտուրը ընկած է, երկրի տնտեսական վիճակը նախանձելի չէ և ուրիշ այս տեսակ պատճառաբանութիւններ։ Հասկանալի է, որ այն հասարակութիւնը, որ նեղ օրերում տասը պատրաստ է զոհելու հանրօգուտ գործի համար, նա բազդաւոր վիճակում հարիւր կը տայ ուրախութեամբ։

Բայց հաւատացած ենք, որ հանրօգուտ գործի համար միտք և սիրտ ունեցող հասարակութիւնը կամ անհատը կը տայ և նեղ օրերում, որքան կարող է. առաջ տասն էր տալիս, այժմ նա կը տայ մէկը, բայց կը տայ։

Իսկ այն հասարակութիւնը, որը պատրաստ չէ հասարակական կեանքի համար և անձնականն է իշխողը, այդ հասարակութիւնը կը տայ հարիւր կամ ոչինչ չի տալ։

Մեր Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութիւնը իւր նեղ շրջանակումն անգամ, խիստ ունեցող մարդու սրտին մօտիկ գործ է կատարում. նա չքաւոր հայ երիտասարդներին, որոնք ուսումն են առնում և արհեստ են սովորում, օգնութեան ձեռք է կարկառում, թոշակ է կապում, և երբ ձեռնհաս է, օգնում է և տնանկներին, կարօտեալներին։ Այս էլ կարծում ենք բաւական էր, որ մարդիկ գնային այդ ընկերութեան ժողովը և մէկ հինգ րուբլի վճարով յաւմաքացնէին գէթ մի որոշ թիւ երիտասարդների արտասունքները աչքերից։ Շատ ծանր բան է տեսնել երիտասարդներին, որոնք ուզում են ուսում առնել, բայց մերկ են, քաղցած են. երիտասարդներ, որոնք ծնուել են, որ ապրեն, ապրել են ուզում. բայց մեռնում են—քաղցից, և այդ այն ժամանակը, երբ ուրիշները շատ ուտելուց ստամոքսն են փչացնում...

Մենք հաւատացած ենք, որ մենք հարկաւոր բոլոր միջոցներն ունինք պահպանելու և՛ Բարեգործ. Ընկերութիւնները, և՛ դպրոցները, և՛ մամուլ... մի փոքր բան է պակասում միայն—կամք, ընկերական, ընդհանուրի օգտի գիտակցութիւնով ներշնչուած կամք։

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

ԲԱԳՈՒԻՑ Մարդաս. Ընկ. յարգելի Խորհուրդը ուղարկել է մեզ հրատարակելու հետևեալը. Համաձայն Բարձրագոյն հաստատեալ Բագուայ Հայոց Մարդասիրական Ընկերութեան կանոնադրութեան 17 և 26-գ յօդուածոց, յառաջիկայ 1885 թ. յունուարի 26-ին կը կայանայ Ընկերութեան ընդհանուր ժողովը, ուր կը քննուին անցեալ 1884 թ. դրամական հաշիւները, կը քննուին ու կը հաստատուին 1885 թ. համար կազմած նախահաշիւը և հին անդամների երեք տարուայ ժամանակամիջոցը լրանալու պատճառով՝ նոր ընտրութիւն կը լինի նախագահի և խորհրդական անդամոց։

Նախագահ ժողովոյ՝
Գ. Թումայեանց։

—

Նոյն օրը «Մոսկովսկիյ Վեդոմոստի» 88-րդ համարում տեղ գտած հետևյալ հեռագրի համաձայն, Ֆրանսիայի կառավարութիւնը ստիպուած է եղել հրաժարական տալ։ Նոր նախարարական ցուցակը հրատարակուած է Ժիւլ Ֆերրիի կողմից։ Ֆերրին ինքն է ստանձնել արտաքին գործերի պաշտօնը։ Ներքին գործերի նախարարութիւնը յանձնուած է Ալբերտ Ֆալլիէրին։ Ֆինանսների նախարարութիւնը՝ Մարտէն Ֆրանսէն։ Պատերազմի նախարարութիւնը՝ Լուի Պերտոյին։ Ծովային նախարարութիւնը՝ Ռիբոտին։ Հանրային կրթութեան նախարարութիւնը՝ Ֆալլիէրին։ Հանրային աշխատութիւնների նախարարութիւնը՝ Ֆրանսիա Ռոբերտին։ Գիւղատնտեսութեան նախարարութիւնը՝ Մելինին։ Առևտրի նախարարութիւնը՝ Ռուվիէին։ Գաղութների նախարարութիւնը՝ Ժիւլ Պատենոտրին։

Ֆրանսիական կառավարութեան փոփոխութիւնը, որ տեղի ունեցաւ Ֆերրիի ձեռքում, ինչպէս տեսնում ենք, ոչ մի կերպ չի ազդել նախարարների անձերի վրայ։ Ֆերրին ինքն էլ, որ նախարարական ճգնաժամի ժամանակ ստիպուած էր հրաժարական տալ, նորից նախարարական ցուցակ է կազմել

ընթերցողները կը մտաբերեն այն երջանիկ օրերը, երբոր Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովի ժամանակ, այն ահագին դահլիճի մէջ, անդամները հազիւ թէ կարողանում էին նստելու տեղ ճարել։ Նոյնպէս, կարծեմ մոռացած չեն լինի և այն, որ ընդհանուր ժողովում դեր և պէմ լսողների թիւն այնքան շատ էին լինում, և այնքան շատ հարցեր էին միմեանց վերայ կուտակվում, որ շատ անգամ տաք վէճաբանութիւններից յետոյ, մի որև է խնդրի մասին վերջնական վճիռը յետաձգվում էր մէս հետևեալ նիստին։ Կարճ ասած, կար մի ժամանակ, երբ ամբողջ Թիֆլիսի հասկացող դասը ոգևորվում էր այդ ընկերութեան անունով, երբեմն էրբեմն հարսանիքներում և զանազան խնջոյքներում նրա յառաջադիմութեան ու նիւթական ապահովութեան մասին սրբատագին բարեմաղթութիւններ անելը, և յօգուտ ընկերութեան մի քանի տասնեակ րուբլի վող ժողովելը, մի քանի զգայուն հայ սրտերին մօտիկ բանն էր համարվում։ Եւ ինչ էք կարծում, ընթերցող, այս բոլոր շարժումը տեսնելով, մեզանից ամեն մէկը կարծում էր, որ շուտով մի քանի տարուց յետոյ, Հայոց Բարեգործական Ընկերութիւնը կունենայ բաւական մի մեծ գումար դրամագլուխ, որի տոկոսքովն ու բազմաթիւ գործադիր անդամաց 5-ական րուբլի վճարով, երազում էինք Թիֆլիսում հիմնել զանազան հանրօգուտ հաստատութիւններ, որպիսիք են. ապաստարան աշակերտաց, հիւանդանոց, աղքատանոց, և այլն և այլն։ Բայց այս բոլորը լաբուսիկ յոյսեր էին, որովհետև Հայոց Բարեգործական Ընկերութեան անունով, երբեմն էրբեմն հարսանիքներում և զանազան խնջոյքներում նրա յառաջադիմութեան ու նիւթական ապահովութեան մասին սրբատագին բարեմաղթութիւնները անելը, և յօգուտ ընկերութեան մի քանի տասնեակ րուբլի վող ժողովելը, մի քանի զգայուն հայ սրտերին մօտիկ բանն էր համարվում։ Եւ ինչ էք կարծում, ընթերցող, այս բոլոր շարժումը տեսնելով, մեզանից ամեն մէկը կարծում էր, որ շուտով մի քանի տարուց յետոյ, Հայոց Բարեգործական Ընկերութիւնը կունենայ բաւական մի մեծ գումար դրամագլուխ, որի տոկոսքովն ու բազմաթիւ գործադիր անդամաց 5-ական րուբլի վճարով, երազում էինք Թիֆլիսում հիմնել զանազան հանրօգուտ հաստատութիւններ, որպիսիք են. ապաստարան աշակերտաց, հիւանդանոց, աղքատանոց, և այլն և այլն։ Բայց այս բոլորը լաբուսիկ յոյսեր էին, որովհետև Հայոց Բարեգործական Ընկերութեան ընդհանուր ժողովների մէջ կատարելապէս հետզհետէ սկսեց տիրել սառնութիւն և անտարբերութիւն գործադիր անդամների կողմից. վերջին նիստին, ամբողջ Թիֆլիսի հայ հասարակութիւնից ներկայ էին միայն 15—20 հոգի, արդեօք, Թիֆլիսի հայ հասարակութեան պատիւ է բերում այս ասպիճան անտարբերութիւնը։ Բայց թէ ինչու գործադիր անդամներից շատերը ընդհանուր ժողովներին մասնակցելուց սառեցան, և թէ ինչու նրանցից շատերը տարեկան անդամակցական 5 րուբլին զլացան այլ ևս վճարելու. լսա՞ս՝ որովհետև կեղծ էին իրենց ամենավառվռուն զգացմունքներով հանդերձ, և բոլորովին արհեստական միայն ի ցոյց մարդոց, ժամանակիս հոսանքի ազարդևն ալ-տուղ։ Բայց ցաւալին այն է, որ պատիւներից շատերը, մի քանի տարի առաջ լրագրական սիւնեակները զարդարում էին անթիւ և գարշելի ածականներով, որոնք աչ ու ձախ կարկտի պէս թափվում էին խեղճ Կ. Պօլսեցոց հայ գործիչների գլխին, որպէս թէ նրբանք անտարբեր, թեթևամիտ և անընդունակ լինէին իրենց ազգային գործերի վարելու մէջ, և այլն և այլն։ Ազնիւ ընթերցո՛ղ, այժմ եթէ սառնութեամբ մտաբերենք մօտիկ անցեալը, մենք կը տեսնենք, որ Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան գործադիր անդամոց թիւը 5—600-ից հետզհետէ իջել է 2—300-ի. մենք լրագիրներից գիտենք և այն, որ արհամարհուած և հազար ու մի կեղտոտ ածականներով ծկռտուած պօլսեցիք, ամեն մի երեկոյթից ու պարահանդէսներից յօգուտ Միացեալ Ընկերութեանց ստացել են 7—800 կամ հազար ռոսկի դուռ արդիւնք. բայց այն ուրիշ բան է, որ Միացեալ Ընկերութեան անդամներից ոմանք անհարազատ են եղել և դրամակուլ են յայտնուել։ Փառք Աստուծոյ, որ մեզ մօտ այդպիսի բան չէ եղել և չի կարող լինել (խօսքս բացառապէս Թիֆլիսի Հայոց Բարեգործական Ընկերութեան մասին է)։

Ուրեմն ինչ է պատճառը, որ Ընկերութեան նիւթական միջոցները տհաճանակ աճելու, կամաց-կամաց նուազում են,—նախ՝ նրա համար, որովհետև Հայոց Բարեգործական Ընկերութեան մասնակցող անդամների մեծամասնութիւնը զոհում է և մասուլ գոյութեան համար, երկու բարեգործական ընկերութեանց համար, հրապարակական ընկերութեան, թատրոնի և այլն և այլն։ Այս այսպէս լինելով, այս չրջանը շատ փոքր է և սահմանափակ, ուրեմն, ընդլայնելով այդ փոքրիկ չրջանը սէյաք է ընդհանրացնել։ Ընդլայնելով, որ Ընկերութեան խորհրդի գլուխ կանգնող մեծարգոյ պարոնները Թիֆլիսի հասկացող դասին համակրելի մարդիկ են, այսուամենայնիւ, քանի որ նրանք ժողովրդի ամեն դասակարգի մարդոց հետ յարաբերութիւն չունեն, անկասկած, անկարող են նրանք անից տուն և խանութից խանութ չրջել՝ 5—ական րուբլի մուրալու համար։ Թիֆլիսը այժմ մեծ տագնապի մէջ է, ուստի Ընկերութեան նիւթական Միջոցները բարելաւելու և ժողովրդականացնելու համար, պատիւ ունեմ խնդրաբար առաջարկելու հետևեալ միջոցները։ 1. Անդամակցական մէանուագ 5 րուբլին վերածել ամսականի, որպէս զի ժողովրդի ամեն դասակարգին դիւրամատչելի լինի։ 2. Մինչդեռ մենք հայերս կրօնական ազգ ենք, ապա ուրեմն հայերի կրօնական զգացմունքները պէտք է յարգել և լաւ հասկանալ, և, հարկաւոր դէպքում, բարոյական գրգիռ յարուցանել նրա սրտում, ու չօշափելի օրինակներով յոյս տալ նրան բարեգործութիւն անելու կերպը, և նրանից ստացած օգուտները դնել նրա առջևը. այն ժամանակ, ամեն մի հայ իւր կարողութեան չափով կ՚օգնէ ընկերութեան։ Օրինակ, գիմեցէք մի անգրագէտ հային, և ամենայն կերպ աշխատեցէք բացատրել ուսման կարևորութիւնը, և ասացէք, որ շուտով Թիֆլիսում մի համալսարան պիտի բացուի. լինչ ջ կարծում, նա ձեզ կը բացասի. բայց մի ևս հային ասացէք, թէ այս լինչ տեղ մի մարդ են սպանել, նրա բազմաթիւ զաւակները մի կտոր հացի կարօտ են մնացել, հէնց ձեր խօսքերը չը վերջացրած, նա արձանագրութիւն տեղ մանկէներ կը տայ։ Ապա ուրեմն, մինչդեռ Հայոց Բարեգործական Ընկերութեան օգտաւէտ նպատակները յայտնի չէ հայ հասարակութեան մեծամասնութեան, հասկացող դասի սեպուհ պարտականութիւնն է ամենուրէք աշխատանք և ձիգ թափել Ընկերութիւնը ժողովրդականացնելու համար։ Եւ այս մի դժուար բան չէ, եթէ Հայոց Բարեգործական Ընկերութիւնը տարեկան մի տապար րուբլով օգնութիւն հասցնէ Թիֆլիսի ամենաձուռտ տներից մի քանի տասնեակ ընտանիքին, որոնցից շատերը մերկանդամ քաղցից մեռնում են, (լինչպէս որ սրանից մի երկու տարի առաջ քաղցից, մի կտոր հացի կարօտ, մեռաւ մի հայ ուսուցիչ), մատակարարէր այսպիսի ընտանիքներին միայն ուտելիք, հանդերձեղէն և վառելափայտ։ Ահա այս կերպով, ամենաքարասիրտ մարդու սրտին էլ կը մեղմանայ, կը կարեկցի և ամենայն սիրով կը մասնակցի Հայոց Բարեգործական Ընկերութեանն։ Կարելի է ճիշդ ցուցակագրել և իմանալ, թէ քանի՛ օրը, անտէր, անօգնական և ողորմելութեան կարօտ ընտանիք կան Թիֆլիսում, և թէ նրբանք որ թաղերումն են բնակվում. շատ հեշտ կարելի է ամեն մի ծխատէր քահանայից իմանալ։ 3. Քանի որ Ընկերութեան գլխաւոր նպատակն է հայի ցաւերին և վշտերին դարման տանել, ուստի՝ տեղից նշանաւոր և հարուստ եկեղեցիների քահանաների իրաքանչիւրին տալ 10-ական անդորրատոմսեր, որ բաժանեն իրենց Կիրակի օրը, իսկ չքաւոր և քիչ ծուխ ունեցող եկեղեցաց քահանաների իւրաքանչիւրին տալ 5-ական անդորրատոմսեր, որ նոյնպէս բաժանեն իրենց ծխոց մէջ։ Ես համոզուած եմ, որ իմ պարտաճանչից պատուական հարք, չեն գլանալ այս թեթև պարտականութիւնները կատարելու, քանի որ մեր ամենաթշուառ հայ ժողովրդոց կենսատու ընկերութեան օգտին է։

4. Թիֆլիսի մէջ 30-ից աւելի համքարութիւն կայ, որոնց համքարապետների (ուստաբաշիները) իւրաքանչիւրին տալ 10-ական անդորրատոմսեր, որ բաժանեն իրենց արհեստակիցների մէջ։ Չմոռանանք յիշել, որ Հայոց Բարեգործական Ընկերութեան յարգելի անդամներին համեստ խորհուրդ կը տայի, որ խորհրդի անդամ ընտրելիս՝ ի նկատի ունենան ընտրելու նաև մի քանի համքարապետներն իրենց խորհրդի անդամ։

Դպրոցների տեսուչ Գ. Ղազարեան.

22 դեկտեմ. Թիֆլիս.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱԽԱԼՑԽԱ, 17 դեկտեմբերի. Անցեալ նոյեմբեր ամսում Կարապետեան և Եղնսաբէթեան երկսեռ ուսումնարանների մեծ. հոգաբարձութիւնից ստացայ մեծ. պարոն Կարապետ Եզեանի նուիրած 2 օրինակ և Հանգուցեալ Յովսէփ Իպմիրեանի արձիւնքով նրա ձեռամբ նուիրուած 36 օրինակ հատընդրէք գրքեր, որոնք ուղարկուած էին Պետերբուրգից Կարապ. ուսումնարանի մատենադարանի անունով. Ամսոյս 12 ևս նոյն հոգաբարձութիւնից ստացայ Թիֆլիսի Կոնսիստորիայից տեղւոյս հոգևոր կառավարութեան միջոցաւ ուղարկուած 2 օրինակ Սարգիս արքեպիսկոպոս Զալալեանի յօրինած „Ճառնախարհորդութիւն ի Մեծն Հայաստան։։ Նոյնպէս Եղնսաբէթեան օրիորդաց ուսումնարանի անունով ընծայիկ տարուայ համար ստացվում էր Հայր Մանդակունուց նուէր մի օրինակ „Նոր-Կտակարան“, մեծ պ. պ. Վահրամ Մուրատեանից և Խաչատուր Ղազարեանից մի մի օրինակ „Աղբիւր։“

Այս նուիրատուութիւնների համար որպէս գրադարանապետ պարտք եմ համարում յայտնել իմ հրապարակական շնորհակալութիւնը Կոնսիստորիային արժ. անդամներին, արժ. Հայր Մանդակունուն և մեծ. պ. պ. Եզեաններին, Մուրատեանին և Ղազարեանին, յայտնելով և այս, որ տեղւոյս ուսումնարանների տեսուչ գեր. Հայր Խորէն Սահակեանին, բոլոր ուսուցիչները և իմ միջոցաւ յայտնեցին նրանց իրենց շնորհակալիքը առանձին նամակներով։

Խմբագիր տէր, բարեհաճեցէք զետեղել այս երկտող նամակս ձեր պատուական „Նոր-Դար“-ում ի գիտութիւն։

Գրադարանապետ՝
Յարութիւն Ղազարեան.

ՈՒՄԱՆ, 10 դեկտ. „Մանկավարժանոց“ ամսագրի մէջ կարդացինք „Նամակ Ումանից“ վերնագրով յօդուածը։ Նրանք վերաբերում է Ձեմարանին, իսկ նպատակը ինչ է եղել, այդ Թողնում ենք։

Նա ասում է. „երբ դուրս եկայ Ձեմարանի կաշկանդող և—միևնոյն ժամանակ աղնուութեան վարակող մթնոլորտից...“ և փաստ է բերում վարակող անուանելու համար այն, իբր Թէ աշակերտները տեսել են, որ ուսուցիչները շատ մեծ ռոճիկ են ստանում, և չեստ անպատրաստ դասեր են տալիս, և Թէ իրենց պահպանութիւնը ծանկելու համար զանազան ծաղրածուութիւններ են գործ դնում։...

Աշակերտի համար աղնուութիւն վարակող ապականութիւն կունենայ, եթէ ուսուցիչը մեծ ռոճիկ է ստանում։

Պղծել հակառակ կը լինէր ասել, թէ ուսուցիչները անպատրաստ դասեր էին տալիս։ Նախ ձվքեր են հղել մեր ուսուցիչները։ Ոչ ապաքէն մեր հայերս մէջ գործող և արևելեան անձինքներից, չը յիշենք Թէ Դերմանիայի և Ռուսիայի համալսարանաւարտ երիտասարդները։

Ընդհակառակը՝ դրանք միշտ պատրաստ են եղել բացատրել ամեն բան, լինչ որ կարող էին նպաստել աշակերտների զարգացման, նրանց նպատակն է եղել դաստիարակել և պատրաստել լաւ երիտասարդներ։

Յիշենք պ. Պալասանեանցի աւանդած հայոց պատմութիւնը։ Այդ ժրաջան մշակը ինչպէս էր Թափանցում աշակերտի մտքի մէջ, ինչ եղանակով էր բացատրում այն չոր և ապ ք ա տ պատմութիւնը, որ աշակերտները կամենում էին լսել նրան մի քանի ժամ անընդհատ։

Յիշենք պ. Վարդանեանցին։ Այդ հմուտ և գործը սիրող ուսուցիչը աշխարհագրութիւն և պատմութիւն աւանդելիս, այնքան գրաւում էր աշակերտներին, որ իւրաքանչիւր դասից յետոյ աշակերտները գոռում էին՝ գնանք եղբայրք, գնանք Եւրոպա (պ. Վարդ. աշխարհագրութիւնից մեզ միայն Եւրոպան էր աւանդում)։ Յիշենք պ. Նահապետեանցի երբև ուսուցչի պաշտօնավարութեան մէջ (մենք բոլորովին հակառակ ենք եղել Նահապետեանցի տեսչութեանը)։

Նա ոչ պակաս առաջինները գրաւում էր աշակերտներին, Թերևս Նորդրողը ևս կրկնել է շատ անգամ մեզ հետ միասին հետևեալ խօսքերը։

„Իբրև ուսուցիչ պ. Նահապ. շատ լաւ է, իսկ իբրև տեսուչ՝ Թոյլ է։ *)

Այս փաստերից յետոյ մենք մեր կողմից անիրաւացի կը համարենք ասել, Թէ Ձեմարանի ուսուցիչները անպատրաստ դասեր էին աւանդում։ Չը գիտեմ որտեղից վերցրած Նոր-Դրոզը առանձնամէ Ձեմարանը վարակող և ազնուութիւն կորցնող հիմնարկութիւն մերթ կարելի է վերաւորել մի հիմնարկութիւն, որը ընդհակառակը բարի նպատակ է ունեցել և համարեայ հասել է նրան։ Վերաւորել մի հայ ժրաջան գործիչներ։ Եւ այդ ի մեր երախտագիտութիւնը։ Վայելել մի քանի տարի հիմնարկութեան ուսուցիչների չնորհքը և վոխարէն երախտեաց ելնել գոռալ „Ձեմարանը մեզ վարակեց, ուսուցիչները ոչինչ չը սովորեցրին“։ Մերթ։ Չը գիտեմ լինչ լինչ պատճառներից դրդուած ծայր. Խորէնը գետեղելէ „Մանկավարժանոցի“ մէջ այդ յօդուածը։

Յանկալի էր յօդուածները գրուէր Թեամբ գետեղել, որովհետև լրագիրը նոյնպէս ուսումնարան է, որտեղ կրթվում է մի ամբողջ ազգ։ Լրագրի պատասխանատուն է քան ուսումնարանինը։ Ուսուցիչը, ուսումնարանը մի քաղաքի կամ գիւղի համար է, իսկ լրագիրը՝ մի ժողովրդի։ Եթէ մենք ուսումնարանը դաստիարակող հիմնարկութիւն ենք անուանում և աշխատում ենք, որ իւր նպատակին հասնի, ինչու սխալ լրագրին ևս չ՚անուանել դաստիարակող հիմնարկութիւն և չ՚աշխատենք, որ լրագիրը ևս իւր նպատակին հասնի։

* * *

ԼԷՅՊՑԻԳ, 15 դեկտեմբերի. Դեպ.

*) Ուրեմն „Մանկավարժանոցի“ նպատակն է, որ աշակերտները ուսուցչիների դատաւոր դառնան։

Խմբ.

Հայ-Ձեմարանական ընկերութիւնը խնամքաբար խնդրում է ձեզանից, որ ներկայ կարելի է, հետևեալ երկտող գրութեանն տեղ չնորհէք ձեր պատուական լրագրի էջերից մէնում։

Ընկերութեան աղքատ գրադարանին ուղարկած է մեծ. Կ. Եզեանը Պետերբուրգից պ. Ս. Կանայեանցի ձեռքով մի չքնաղ հանգուցեալ Իպմիրեանցի հետևեալ գրքերը. 1, Գրոց և բրոց. եղիշէ, պատմութիւն Վարդանանց. Թէոդորոս Ըրշտունի. Հայը և Հայաստանը. Ղևոնդեանց Եդեսացի. Մովսէս Խորենացի. պատ. Յովհաննու կաթողիկոսի. պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի. Ստեփաննոս եպիսկոպոս Սիւնեաց. Փաւստոսի Բիւզանդացւոյ պատմութիւն Հայոց. Գամառ-Քաթիբա. Ղազար Փարպեցի. Առ Ձեռն բառգիրք. Հայկազեան լեզուի բառաքննութիւն. Գանձք Արամեան լեզուի. այս վերոյիշեալ տասը և հինգ կտոր գիրքը ընկերութիւնն ստանալով յայտնում է մեծ. Կ. Եզեանցին իւր խորին շնորհակալիքը։

Քարտուղար ընկերութեան՝
Սարգիս Տէր Գաբրիէլեանց.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Փարիզից, դեկտեմբերի 10-ից (22) հեռագրում են Բերլինի „Post“ լրագրին. „Անգործ մնացած բանւորները „Ալիգազրում“ ժողովքի գումարուեցան և կարգադրեցին չնորհաւորութեան ուղերձ ուղարկել Լէյպցիգի պղօցեսում դատապարտուածներին, որոնք իրենց Թէև անյաջող փորձերով երբ Թէ ուեւէ նպաստեցին յեղափոխութեան գործի յաջողութեանը, քան վերջին ընտրութիւններում յօգուտ գերմանական սօցիալիստներին տուած հազար ձայները. Բացի այդ՝ առաջարկութիւն արուեցաւ յարձակումն գործել Մադաս և Սենտ-Պելաժի բանտերի վերայ, որպէս զի այնտեղ բանտարկուածների ազատութեամբ նոր յեղափոխութիւն անեն։

—

„Times“-ի ասելով՝ զանազան ազգութիւնների բազմաթիւ եւրոպական գործակալները կարգի են բերում չինական զօրքերը և եւանդով վարժեցնում են նրանց պատերազմական գործողութիւնների մէջ. դրանով էլ բացատրվում է այն անյաջողութիւնը, որըն հանդիպում են Ֆրանսիացիները չինացիների հետ պատերազմելիս։ Չինաց զօրավարները սեպհականել են բոլոր այն ձևերը, որոնց գործ է դնում գեներալ Գօրդօնը Սուդանում, այսինքն՝ դադրեցնել Թշնամուն անդադար յարձակումներով և երես առ երես պատերազմի ժամանակ փախուստ տալ։ „Times“-ի Գոնկոնգի Թղթակցի ասելով՝ գործերի դրութիւնը Չինաստանում այժմ բոլորովին այլ է, լինչ որ էր 1860 Թ.։ Չինաստանը այլ ևս չունի այն բնագրումը, որի չնորհով կարելի լինէր հեշտութեամբ յաղթել նրան։ Չինաց եղկիրը այժմ բանականին վտանգաւոր Թշնամի է ներկայացնում, որի հետ գործ ունի Ֆրանսիան։

—

Փարիզից գրում են, որ Ֆրանսիական կառավարութիւնը մեծ պետութիւններից գաղտնի տեղեկութիւն է ստացել, որ նրանք մտադիր չեն եգիպտական ֆինանսները կարգի բերելու մասին Անգլիայի առաջարկութեանը պատասխանելու և Թէ նրանք իրենց հայեացքները չեն յայտնել, մինչև որ Ֆրանսիան դրա վերաբերութեամբ վճռորոշականապէս իւր կարծիքը չը յայտնի։ Իսկ ինչ վերաբերում է Ֆրանսիական կառավարութեանը, նա ըստ ե-

բևուԹիեն բոլորովին չի չաապում այդ հարցը վՀռելու, պատճառը որ Եգիպտոսից եկած անհաճոյ տեղեկուԹիւնները ցոյց են տալիս, որ անհրաժեշտ է մեծ զգուշուԹիւն բանեցնել, որպէս զի ծանր պատասխանատուԹեան տակ չ՝ընկնիլ։

—

„Indépendance Bèlge“ ԹերԹին հեռագրում են, որ Մակեդոնիայում մի ինչ որ խռովուԹիւն է նկատւում, որպիսին ծագեցաւ Բօսնիա—Հերցոգվինում ապստամբուԹիւնը երևան հանելուց առաջ։ Բոլոր մեծ քաղաքներում փող է հանգանակվում յօգուտ բուլղարացիների։ ԿառավարուԹիւնը համակրուԹեամբ է վերաբերվում այդ շարժողուԹեանը։ Մակեդոնիայում չինովնիկների վերաբերուԹեամբ վաղուց արդէն լուրեր են տարածուած և Ռուսիայի, Աւստրիայի և Անգլիայի Թերթերում ներկայացուցիչները առանձին գործակալներ են ուղարկել այնտեղ, գործերի ներկայ դրուԹեան հետ ծանօԹանալու համար։

—

Բ. Վուռը օրերումս յայտնեց սերբական կառավարուԹեանը, որ մի օֆիցերի ուղեկցուԹեամբ արդէն մէկ լնժեներ է ուղարկել, երբև ներկայացուցչ՝ Թերքա-սերբական երկաԹուղու Ճիշդ սահմանը որոշելու համար։ Ցիշեալ հաղորդուԹեան մէջ ասուած է նոյնպիսի ներկայացուցիչները Սերբիայի կողմից նշանակելու մասին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական լրագրները հաղորդում են, որ յայտնի վիպասան Շվիցհագենը իւր գրած „Neilquellen“ մի նոր հեղինակուԹիւնը 10 հազար մարկով ծախել է Վիէննայի „Neue Freie Presse“ ԹերԹի վերայ։ Անցքը պատահում է Բէյնի վերայ։ Հեւանդները Բերլինից են և առաջին տեղն են բռնում։

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

„ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

27 Դեկտեմբերի.

Բ ի գ ա. Վիէննեան ֆարվատերում, Բօլգարիայ սկած մինչև քաղաքը, սառոյցը շոգեմբեքենայով կտրատուած է և նաւերի համար վերջնականապէս ազատ ճանապարհ է բացուած։

Բ լ ագ օ վ ե շ չ է ն ս կ. Մօտերումս Չինաստանից այստեղ եկող Ալգունսկի նահանգապետը խնդրեց արգելել ռուսներին՝ չինական կողմում, Իդնաշինի հանդէպ, ոսկի արտահանելու, բայց տեղւոյս նահանգապետը հրաժարուեց միջամտելուց, Թոյլ տալով, որ իրենք չինացիները չափշտակիչների հետ գործ տեսնեն։ Լուրերին նայելով՝ չինացիները 3 ցացակարից արդէն 500 մարդուց բաղկացած զօրախումբ են ուղարկել արտահանուԹեանը հսկելու համար։ Վերջին տեղեկուԹիւններին նայելով՝ հանքերում բոլոր բանւորները 4000 հոգի են։

Փ ա բ ի զ. Տ. Հիւգի սրօցեսը սկսուեցաւ. մեղադրուողը խոստովանեցաւ Մօրենին գիտմամբ սպանուԹեան մէջ։

Պ ե տ ե ր բ ո ւ բ գ, 28 դեկտ. Իբրև լրացումն մաքսային տուրքերի աւելացնելու մասին առած լուրերին, լրագիրները հաղորդում են, որ տաբքերի աւելացումները մտադրուած է. տաբեխի (սեզդի) պուդին —7 կ., սև Թէյին (չային) եւրոպական սահմանի վերայ 4, ասիականի վերայ—5, աղիւսեայ (կիրպիչ) Թէյին—1 ր. 10 կ., բուսական խէղերին—20 կ., ոլորած մետաքսին—8 ր., մետաքսեայ մանուածքին—8 ր. և 16 ր., և շամպանեայ գինու շիշին—15 կ։

Մաքսային եկամուտից այս աւելացումից սպասւում է եկամուտ 5 կամ 6 միլլիոն րուբլի։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Թիֆլիսի հրատարակւած վերայ վաճառահանուող ապրանաց ընԹացիկ գները։

Դեկտեմբերի 28-ին

—

ՑՈՐԵՆ.—Դուռնուկի պուդը			75 կ.
„ Գանձակի	„		65 „
„ Շորագալի	„		75 „
„ Ղազախի	„		50 „
„ Երևանի	„	ապահ.	
„ Նուխու	„		70 „
ԱԼԻՒՐ.—Բէսոնով 1-ին			12 ր. „
Եղերաց Հավերդանցիներին.			
Կարմիր Նշան.—00-ի			11 ր. 50 „
„ „ 0			10 — 80 „
„ „ 1			9 — 20 „
„ „ 2			8 — 50 „
„ „ 3			7 — 75 „
„ „ 4			6 — — „
„ Դուռնուկի պուդը			1 ր.
„ Գանձակի	„		85 „
„ Շորագալի	„		95 „—1 ր.
„ Խառն տեսակները			75—80 „
ԳՈՐԻ.—Սպիտակը	„		40 „
„ Սև ը	„		42 „
„ Գարիջրի համար			60 „
ԲՐԻՆՁ.—Ա.քուլիայ	„	2 ր. 20 կ.	„
Պաշարը շատ			
„ Նուխու	„	1 „	—50 „
„ Խառն տեսակները		1 „	30—40 „
ԱՂ.—Նուսխայի	„		50 „
„ Ղուրդի	„		93—95 „
„ Կազդամակ (զաքը)			65—70 „
„ „ (կասը)			55—60 „
„ Բազմայ	„		23 „
ԻՒՂ.—Օշնայի	„		11 10 „
„ Նիժեգօրոդակի	„		12 10 „
Մաքուր. կարագ			10 ր. 50 „
ՁԻԹ.—Շերբաթի	„		9 ր. 60 „
„ Սև ի	„		4—60 „
„ Չիլիաղալի	„		11 „ 75 „
ՁՐԱԳՈՒ.—Ձանազ. տեսակ			3 „ 25 „
„ Հալած	„		4 „ 30 „
ՆԱԽԻ.—Ձան. զոբմաչ			պ. —40 „
ՄՈՄ.—Կրնասովնիկովի			պ. 11 ր. 60 „
Օշնասայի	„		Չը կայ
„ Տօլսկի զոբմաչ.	„	11 „	— — „
ՍԱՊՈՆ.—Տօլ. զոբմ. 1 տ.	„		5 ր. — „
„ „ „ 2 տ.	„		3 „ 40 „
„ „ „ 3 տ.	„		2 „ 40 „
„ „ „ Մարմարիոնի			3 ր 50 „
„ „ „ 1 և կէս ֆ-անոց			4 „ 50 „
„ Բայանդար. և ընկ. զոբ.			
1 տես. պ.			4 ր. 60 „
2 տես.	„		3 „ 30 „
3 տես.	„		2 ր. 40 „
Մարմարիոնի	„		3 „ 40 „
ԼՈՒՑԻԼ. (ապիչկա) Օսպօվկի հաշիվը			3 „ 80 „
„ Կրեմովկի	„		ապահ.
„ Կարմիր 300-անոց	„		ապահ.
„ Կաբինետնի	„		ապահ.
ՇԱՔԱՐ.—Բլօդակի պ.		6 ր. 95	„ „ Թոյլ
„ Դնեպրան մեծագլուխ.		6 ր.	85 կ.
„ „ մանրագլուխ պ.		7 ր.	60 կ.
„ „ ճուսոյի Բլոդակի		6 ր.	90 „
„ Սաբալօվկայ			ապահ.
„ Կարագած Ուլազովկա պ.		7	„ 10 „
„ Փխեն			6 ր. 80 „
ՇԱՔԱՐԱԻԱՁ.—Օշնասյի պ.			5 „ 65 „
Կաբամել Նազօչնիկովի			
Ժեամի արկղում			7 ր. 70 „
„ „ փայտի արկղում			6 „ 55 „
„ Պօլնակովի			
Ժեամի արկղ.			7 „ 60 „
„ „ փայտի արկղ.			6 „ 50 „
ՄԱԿԱՐՈՆ.—Օշնասյի			պ. 4 „ 20 „
„ „ Սամարայի			5 „ — „
ԿՕՖԷ—Մօքքօ			պ. 21 „ — „
„ Բլօ			„ 13 „ 80 „
ԿԻՆԱՄՕՆ. (դաբչին)			„ 10 „ 30 „
ԳՂՊԵՂ.—Սինգաֆօրի			պ. 15 ր. 80 „
ԿՈՁԱՊՂՊԵՂ (հոտ).—Սպիտակը			պ. 15 „ 50 „
Մոխրագոյնը			„ 12 „ 50 „
Գեղինը			„ 6 „ 50 „
ՊԱՂԼԵՂ (շիլ).			„ 2 „ 15—20 „
ԱՐՉԱՍՊ (Զաղ)			„ 1 „ 40 „
ԾԾՈՒՄՐ (Քաքօրի)			„ 2 „ 40 „
ԽՈՒՆԿ.—Սպիտակը			„ 10 „ 30 „
„ Սևը			„ 6 „ 30 „
ԿԼԱՅՏԿ			15 „ 80 „ Թոյլ
ՕՇԻՆԴՐ (Նաշադիր)			8 „ 40 կ.
ՑԻՆԿ (Լիտասվօյ)			„ 5 ր. 20 „
ՊՈՂՊԱՏ.—Սենգու կը			սպասում ած
ՍՊԻՏԱԿ ԹԻԹՆԻ. (Ժեստ)			„ 15 „ 80 „
ՁԱՄԻՋ (Սաւզա) քսակները պ. (նոք)			2 „ 15 „
„ Մեղուկները (նոքը)			—2 „ 80 „
Վերջինի համար առ ու ծախս չը կայ.			
ՆՈՒՇԸ.			11 „ 30 „
ԿԱՂԻՆԸ (Թեյի)			պ. 3 ր. 35 „
ՇԱԳԱՆԱԿ			„ 1 „ 30—40 „
ԸՆԿՈՑՋ			1 ր.
ՕՂԻՆ.—Առանց տակառի 5 ր. 50 կ. %-ը			8%
ՍՊԻՏԸՂ.—Տակառով			9½
ՄՈՐԹ.—Ոչխարի (Մաս. Համաը) զոյգը			90 կ.
„ „ (Օգնս. Համաը)			1 „ 20 կ.
Առևտուրը Թոյլ պաշարը շատ.			
„ Այծի (Մաս. Համաը)			1 „ 60—80 „
„ „ (Դաբաղ. Համ.)			2 „ 60 — „
ՏԱՎԱՐԻ կաշին			7ը. 50 կ.
Մաքսիլի Տանպլեյա			39 ր. 25 „
„ Շէյսոն			37 „ 25 „
ԲՈՒԽԴ.—Թուշի—վրաց			ապահ. ած
„ Գանձակի			3 ր. 60 կ.
„ Գնողինը չը կան			
„ Ղազախի			„ „
„ Շուլու			„ „
„ Ղարաբաղի			„ „
„ Նուխու (աշխան)			3 ր. 90 կ.
„ „			Թոյլ
„ Խորասանի			սպասում ած
բոլոր տեսակների առուծախը խափան դադարած է։			
Բ ա մ բ ա կ.—Եգևանի Ամերիկ.			
„ „ սերմից պ.			7 ր. 30 կ.
„ „ Գարագէօզլի սերմ.			„ 6 „ 20—30 կ.
ՄԱՆԱԾ			„ 9 ր.
ԲՈՃՈՒ Նուխու			„ —
„ Իմշլուխ			„ —
ԹԵԼ.—Կախկախ			
ԼԱՍ (Ֆլեղոն)			
ԸՆԿՈՑԻ ՈՍՏԼ.—(Նապլիվ լաւ տեսակը 4—6 ր. սուր տեսակը 1 ր.—2 ր.			
ՈՍԿԻՆ—Պօլիմպերիալը			8 ր.
„ Բաֆախան			ապահ. ած
„ Տաճկաց լիբան			8 „ 75 „
ԱՐԾԱՓ.—Բուրլիանոց.			ապահ. ած
„ 20-կոպէկանոց			ապահ. ած
ԹԻՑԼԻՍԻ առևտ. բանկի ակցեան			255 ր.
„ Քաղաքային „			71—72 „
„ Ազնուականների կալուածական բանկի գրաւական տոմսը (Закладной листъ)			83—25 „
ՔՈՒԹԱՅԻՍԻ բանկի նոյն տոմսը			83—84 „
ՏՈՄՍԵՐ.—Պետական բանկի 5%			
1-ին			99 „ — „
2—5-րդ			98 „ — „
Արևել. փոխառութ. 5%			
1-ին			95 „ 87 „
2-րդ			95 „ 75 „
3-րդ			97 „ — „
Վիճակահանութեան 5%			
1-ին շրջանկ			225 ր. 75 „
2-րդ շրջանկ			213 „ — „
ԹԼՑ.— կ և Ս. (К. и С.) Պապով եղբարց			
1 ր. 40 կոպ—2 ր. 50-կոպէկանոցի համար վերջ.			
մինչև 300 ր. 6%.			
300 — 500 „ 9%.			
500-ից աւել 12%.			
Շուկայում մանաւանդ			
„ անհանից մօտ բոլոր տես.			
„ տակների համար վերջ %12			
ԾԻԱԽՈՏ.— Կուշնարեվի.			
Պապերոս.			
1-ին և 2-րդ տեսակի վերջ.			24%
3-րդ „			„ 12%
Թամբաքոս.			
2 բուբլիանոցի			„ 18%
1 ր. 20-կոպէկանոց			„ 17 „
„ 80 „			„ 12 „
„ 40 „			„ 10 „
Ամանօվի			
Պապերոս.			
1-ին և 2-րդ տեսակի վերջ			24%
3-րդ „			„ 12%
Թամբաքոս.			
2 բուբլիանոցի			„ 18%
1 ր. 20-կոպէկանոց			„ 17 „
„ 80 „			„ 12 „
„ 40 „			„ 10 „
„ „ Բազաբչանցի			
I և II տեսակ			„ 25%
III „			„ 20%
ԿԱՐԵՇՀԱ.—Ժալկեի պտղը			6 ր. 80 „
„ քսակաոտ			„ 5 ր. 60 կ.
Բխմաբևնկոի			„ 7 „ 50—60 „
ԹԱՂԱԹՈՒՂԹ (հաքա)			5 ր. 52 „

Օգեստոսի բօբսան, դեկտեմբերի 19-ին։

—

Կուրսը երեք ամսական.

Լօնդոնի վերայ դիզը	959	վաճառվ.	956
Մարսէյլի „ „	263½		264½ „
Փարիզի „ „	—	—	—
Վիէննայի „ „	128	„	129
Բերլինի „ „	—	„	—

Ոսկին Պօլիմպերիալը 7—90 „ 7-80 „
„ Լիբան 8-65 „ 8—58 „
աբծաթ. ր երկի 1 ր. 32 կ.—1 ր. 27 „
Շաքար. Բլոդակի 6 „ 15 կ
„ Չերնիգովի 6 ր. 10 „
„ Գնեվան .5 „ 95 „
„ Մանրագլուխ (7 ֆնտ.) 6 ր. 70 կ.
„ կտրատած-Ուլազովկա,
Սեղուկներինը 6 ր. 30 „
Տախտաներինը 6 „ 25 „
„ „ Փխեն մեղուկներինը 6 ր.
Շաքարաւազ 4 ր. 82½—90 „
Սաւզա (նոքն) մեղուկներում 3 ր. 25—40 „
Քսակներում 3 ր.—3 ր. 10 „
Նուշ (քաղցր և մանրած) 12 ր. 40—75 „
Նաւթ Բաքուի 95 կ.—1 ր.

Խմբագիր—Հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Յենդուբայի ԹոյլտուուԹեամբ մամուլի տակից դուրս կը գայ „ԲնաւորուԹեան նշանակուԹիւնը գործնական կեանքի մէջ“. ՀեղինակուԹիւն Բէռնէյնի, ԹարգմանուԹիւն Ս. Մուշեղեանցի. բաժանորդագինն է 50 կոպէկ. տպուելուց վերջը կը լինի մէկ մանէթ. բաժանորդները կարելի է գրուել Ինֆիլաջեանի գրավաճառանոցում, Մ. Սարգիսեանի մագազիայում (Армян. базаръ) և Շահնազարեանի տպարանում, Михаил. мость, д. Мирзоева։
12—12

ՆՈՐ ԳԻՐՔ
ԶԵՌՆԱՐԿ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՅՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ
Ս. ՄԱՆՈՒԷԼԵԱՆԻ

Վաճառւում է Թիֆլիսում՝ կենդրոնական գրավաճառանոցում, եղբարց Ծովիանովների բանկային գրասենեակում, պ. Ծատուրեանի լամպային մագազինում։ Օտարաքաղաքայիք փոստի ծախք չեն վճարում դիմելով հեղինակին՝ Թիֆլիսъ, Лабораторная улица, № 11. С. П. Мануэлянцу.
Գինն է 2 րուբլի։
8—3

ԼՈՅՍ ՏԵՍՈՒՔ
«Սրտի Թարգման կամ բանաստեղծուԹիւններ» Գ. Շէրենցի. Ս.. մաս։ Ծախվում է Թիֆլիսի հայ գրավաճառանոցներում և Մանուէլեան եղբարց վաճառատան, Օրբէլեան փողոց, № 24։
Գինն է 50 կոպէկ։
5—5

ՆԱԽԻՆ ԱՐՇՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆ
ԵրկուշաբԹի՝ յունվարի 7-ին կամբը կ՝տայ
ՐԵՆՆԵՖԻՍ Տ. ԱԼՄԱՍՅԻ և Գ. ՍԱՖՐԱԶԵԱՆԻ
I
առաջին անգամ Թիֆլիսի բեմում
ՄԱՆԿԱԿԱՆ ԲԺԻՇԿ
կամ
«ԹԻՒՆԱՒՈՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ»
Դրամայ 5 գործողուԹեամբ
II.
„ԿԸՌԹ—ԿԸՌԹ“
Վ.օգ. 1 գործուԹեամբ
Ռուսերէն, Թուրքերէն և Հայերէն լեզուներով։ Այս վոդեվիլը կրկնում ենք շատերի խնդրանօք։
Տոմսակները կարելի է ստանալ կասսայից և պ. Սաֆրազեանից։
ՄանրամասնուԹիւնը ապիշատով, որը լոյս կը տեսնի յունվարի 4-ին։
2—2

Կովկասի Հայոց Բարեգործական ԸնկերուԹեան Խորհուրդը պատիւ ունի՝ յայտնել ԸնկերուԹեան Յարգելի Անդամներին, որ աւարտած գոլով ԸնկերուԹեան գործունէուԹեան Երրորդ Տարեշրջանը, նշանակուած է Ընդհանուր ժողով ամսիս 30-ին կիւրակէ, առաւօտեան 11 ժամին, Քաղաքային ԿառավարուԹեան տան դահլիճում, կատարելու համար ներկայ Չորրորդ Տարեշրջանի ընտրուԹիւնքը (Կանոնագրու. Թիւն§§ 25, 42). յայտնապէս ընտրել ԸնկերուԹեան Ընդհանուր ժողովի Նախագահ և Քարտուղար, Խորհրդիհինդ անդամ ևս և հինգ փոխանդամ։
3—3

Въ Тифлисскомъ Ремесленномъ Собраніи въ субботу, 29 декабря
СВѢЖЕЙШО-ДѢТСКІЙ
ВЕЧЕРЪ
съ музыкою и сазандарами „Абдулъ-Баги“. За входъ: съ членовъ собранія, семейства ихъ и дѣтей по 30 коп., гостей кавалеровъ по 1 р., дамъ по 50 к. Начало въ 9 часовъ вечера.—Въ воскресенье, 6 января, **Дѣтскій Валъ** съ ёлкою.
2—2

„MESSAGERIES MARITIMES“
ՇՈՓԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Այսու պատիւ ունի յայտարարելու, որ նրա շոգենաւերը ճանապարհվում են ամեն շաբաթ, երեքշաբԹի օրերը Տրապիզան, Կերասունդ, Սամսոն, Ինեպօլի, Կ. Պօլիս, Զմիւռնիա և Մարսէյլ։

Ճանապարհորդական տոմսակները և նաւավարձի համար տեղեկուԹիւն ցանկացողները կարող են դիմել Բաթումում պ. պ. Էյլերս Բուրկհարդի և ընկ. կոնտորան, իսկ Տիֆխուսում՝ Դէորդ Հէյնրեան Հէյնրեանցի մօտ. Սիօնի փողոցում, Արծրունու քարվանսարայում։
10—7

ԹԱՆԳԱՐԱՆ ԵՒ ԴԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Վ. Վ ի ն տ ե ր ի.

Գօլովինսկի պրօսպեկտ, լազգօնների փոստայի մօտ.

Պատիւ ունիմ յայտնելու Թիֆլիսի յարգելի հասարակուԹեան, որ Ծննդեան տօների համար արտասահմանից նոր մոմեայ ձեւակերպուԹիւններ եմ ընդունել, նոյնպէս և մի քանիա նատօմի քաղանդարներ (միմիայն հասարակաւորների համար), որոնցից տէքի են ընկնում. Գերոլդ, որը ցոյց է տալիս Նոյին Կ. Մ. ԹագադրուԹիւնը Մոսկուայում։ Զուբկին, Ստեփան, յայտնի աւազակապետ, որը 1882 Թուին Մոսկուայի նահանգ. դատարանից դատապարտուեցաւ։

Հարեմի մի խումբ, որը բաղկացած է երեք գեղեցիկ արհեստագործած մոմեայ ձեւակերպուԹիւններից, և ուրիշ շատերը։

Բացի այդ՝ երկրորդ նոր գեղարուեստական նկարների փոփոխուԹիւն կը լինի։

Յուսով եմ, որ Թիֆլիսի յարգելի հասարակուԹիւնը կը յարգէ իմ Թանգարանը իւր այցելուԹեամբը։

Թանգարանի մուտքը 30 կոպ. է, 10 տարեկանից պակաս երեխանները և գինուորական տօրին աստիճանաւորները 15 կոպ. են վճարում։

Վ. Վ Ի Ն Տ Ե Ր. 3—3

Дозволено цензурою. Тифлисъ, 28-го Декабря 1884 г.

Տպարան Ա. Ս. Միխելսոնի տ. № 12. Типографія А. А. Михельсона Гол. пр., д., № 13.